

աւելի լաւ համարեցայ հոս այս վանքիս մէջ իմ կենացս մնացորդն անցնել խաղաղութեամբ աստուծոյ հետ, ջանալով գտակար լինիլ Զրիստոսի ժողովրդեան, ինչչափ որ տրուած էր իմ տկար կանացի ձեռքերուս կարողութիւն, քան թէ երթալ անիթաւութեանց եւ կեղեքմանց մասնակցիլ: Լաւ համարեցայ քեզի պէս առանց յուսոյ սիրել, սերը նիւթականութեան շիջեցնել երբեք իւր բարձրութենէն, եւ այսպէս այս կարճ կեանքն անցնել, անդին միշտ միասին ապրելու համար յաւիտենական կենաց մէջ:

Այս խօսքերը գրուցելուն՝ Վասկանուշի քնքուշ ծիւնափայլ ձեռքը Յովնանու առիւծաթաթ ձեռքին վրայ էր, իր աչքերը երկինքն էին, սերը իւր բնական գեղեցկութեան աւելի փայլ մը տուեր էր. իսկ Յովնան գլխիկոր հագիլ թէ կը համարձակէր աչքերը վերցնել նայիլ այն հրեշտակին՝ որ գինքն առջի օրէն յափշտակած էր՝ այն անձին, որուն հետ բաղդատելու բան մը աշխարհքիս վրայ չէր տեսած, եւ նորա աչաց մէկ ակնարկին առջեւ իբրեւ տղայ մը կը սարսռէր:

Շարժեցաւ Վասկանուշ ելաւ, Յովնանու նայեցաւ եւ հասկցաւ, որ այդ շարժմունքը հրաժարական կը կարծէր. ըսաւ ծիծաղելով.

— Ո՛չ, Յովնան, դեռ երթալու ժամանակ չէ, այսօր քեզի հետ միատեղ պիտի ճաշեմ. աշխարհքես եւ անոր հաճոյից հրաժարեալ՝ այս զուարճութիւնն անգամ մը կ'ուզեմ ունենար Եգիպտոսի մենակեաց անապատականք նաեւ երկու արմաւ եւ հացի մը պատառիկ միասին կուտէին եւ այդ ճաշը սեր կ'անուանէին:

Այս ըսելով ձեռքէն բռնեց եւ դէպ անյայտ դուռը տարաւ, եւ Յովնան փոքրիկ սենեակ մը տեսաւ՝ անպաճոյճ սեղան մը եւ երկու աթոռ դիմացէ դիմաց դրուած: Իշխանուհին նստաւ, Յովնան եւս նստաւ իբրեւ փուշի վրայ եւ հնազանդելու համար նորա ակնարկին. իսկ Վասկանուշ բաժակը լցուց եւ Յովնանու դառնալովդ «Մեր յաւիտենական կենաց հարսանեաց»,— ըսաւ, եւ պուտ մը խմելով տուաւ նորա, մեր առաւ քամեց բաժակը մինչեւ վերջի կաթիլը. Վասկանուշ որ իրեն կը նայէր՝ հարցուց.